https://doi.org/10.46991/hc.2022.17.1.083

Միքայել Մալխասյան
պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ պատմության ֆակուլտետ
Հայոց պատմության ամբիոն

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ (XIX ԴԱՐ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)[1]

Հիմնաբառեր՝ Արցախ (Ղարաբաղ), պատմական ժողովրդագրություն, XIX դար, XX դարի սկիզբ, Ռուսական կայսրություն, Իրան, հայ բնակչություն, թյուրքալեզու էթնիկ խմբեր, վարչատարածքային բաժանում, ժողովրդագրական քաղաքականություն, Դաղիվանք, Շուշի:

Արցախում XIX դարում և XX դարի սկզբին տեղի են ունեցել ակտիվ ժողովրդագրական գործընթացներ, որոնք առաջ են բերել տարաբնույթ հետևանքներ: Սույն հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրության նպատակն է քննել և լուսաբանել նշված ժամանակաշրջանում Արցախի պատմական ժողովրդագրության որոշ հարցեր, որոնք ակտիվորեն կեղծվում և խեղաթյուրվում են ադրբեջանական պատմագեղծարարների կողմից: Հոդվածը նպատակ չունի ներկայացնելու Արցախի ժողովրդագրական ամբողջական նկարագիրը քննարկվող ժամանակաշրջանում: Ուսումնասիրել ենք ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Արցախի հայ բնակչության տեղաշարժերի խնդիրը, 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով պարսկահայերի վերաբնակեցմանը Արցախի առնչության ծավալների հարցը, Շուշիում տեղաբնիկ հայ բնակչության տեսակարար կշռի խնդիրը, վանքապատկան հողատիրության ու ժողովրդագրության փոխառնչությունը (Դաղիվանքի օրինակով) և հարակից հարցեր:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դեռևս XVIII դարի կեսերից Արցախում նկատվող ակտիվ միգրացիոն գործընթացները նոր դրսևորումներ են ստանում ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, մասնավորապես՝ հայ բնակչության տեղաշարժերը նախալեռնային և դաշտային հատվածներից դեպի լեռնագավառներ: Կարևոր է ֆիքսել, որ Արցախում պարսկահայ վերաբնակիչների թվաքանակն անհամեմատ ավելի քիչ է եղել, քան Հայկական մարզի տարածքում:

XIX դարավերջին և XX դարասկզբին առնչվող հարցերից կարևոր է, որ Ռուսական կայսրության առաջին մարդահամարի (1897 թ.) և հետագա վիճակագրական հրապարակումների տվյալները ցույց են տալիս, որ հայերը Շուշիում մեծամասնություն են կազմել:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «20TTSH-074» ծածկագրով գիտական նախագծի շրջանակներում:

Mikayel Malkhasyan
YSU, Faculty of History, Chair of History of Armenia,
Associate Professor, PhD in History

SOME ISSUES OF THE HISTORICAL DEMOGRAPHY OF ARTSAKH (19TH CENTURY – THE BEGINNING OF THE 20TH CENTURY)

Keywords: Artsakh (Karabakh), historical demography, 19th century, the beginning of the 20th century, the Russian Empire, Iran, the Armenian population, the Turkic ethnic groups, administrative-territorial division, demographic policy, Dadivank, Shushi.

Active demographic processes took place in Artsakh in the 19th century and at the beginning of the 20th century, bringing to various consequences. The purpose of this article is to examine some issues of the historical demography of Artsakh in the mentioned period, which are actively falsified and distorted by Azerbaijani history falsifiers. The article does not aim to present the complete demographic picture of Artsakh in the period under discussion. We have studied the issue of displacement of the Armenian population of Artsakh during the Russo-Persian wars; the issue of the extent of the resettlement of Persian Armenians in Artsakh after the Turkmanchay Treaty (1828); the issue of the proportion of the native Armenian population in Shushi; the connection between monastic land ownership and demography (on the example of Dadivank), and related issues.

The research results show that the active migration processes observed in Artsakh since the middle of the 18th century took on new shape during the Russo-Persian wars, in particular, the movements of the Armenian population from the foothills and plains to the mountainous regions. It is important to note that the number of Armenian settlers from Iran in Artsakh was much less than in the territory of the Armenian oblast.

Among the issues related to the end of the 19th and the beginning of the 20th century, it is important that the data of the first census of the Russian Empire (1897) and subsequent statistical publications show that Armenians were the majority in Shushi.

Микаэл Малхасян
ЕГУ, Исторический факультет, Кафедра истории Армении,
доцент, кандидат исторических наук

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОЙ ДЕМОГРАФИИ АРЦАХА (XIX ВЕК – НАЧАЛО XX ВЕКА)

Ключевые слова: Арцах (Карабах), историческая демография, XIX век, начало XX века, Российская империя, Иран, армянское население, тюркоязычные этнические группы, административно-территориальное деление, демографическая политика, Дадиванк, Шуши.

В XIX веке и в начале XX века в Арцахе происходили активные демографические процессы, которые имели разные последствия. Целью исследования, проведенного в рамках данной статьи, является рассмотрение и освещение некоторых вопросов исторической демографии Арцаха в указанный период, которые активно фальсифицируются и искажаются азербайджанскими фальсификаторами истории. В статье не ставится цель представить полную демографическую картину Арцаха в рассматриваемый период. Нами изучен вопрос о перемещениях армянского населения Арцаха в ходе русско-персидских войн, вопрос о масштабах переселения персидских армян в Арцах в результате Туркманчайского договора 1828 г., вопрос о доле коренного армянского населения в Шуши, взаимосвязь между монастырским землевладением и демографией (на примере Дадиванка) и связанные с этим вопросы.

Результаты исследования показывают, что активные миграционные процессы, наблюдавшиеся в Арцахе с середины XVIII века, приняли новые проявления во время русско-персидских войн, в частности, перемещения армянского населения из предгорий и равнин в горные районы. Важно отметить, что количество армянских переселенцев из Ирана в Арцахе было намного меньше, чем на территории Армянской области.

Среди вопросов, относящихся к концу XIX и началу XX века, важно, что данные первой переписи населения Российской империи (1897 г.) и последующие статистические публикации показывают, что армяне составляли большинство в г. Шуши.

* * *

Ներածություն: XVIII դարի կեսերից Արցախում նկատելի են դառնում այնպիսի փոփոխություններ, որոնք խաթարում են հայկական երկրամասի պատմական զարգացման բնականոն ընթացքը: Այս տեսանկյունից բացասական դեր է խաղում Արցախի շրջակայքում և այնուհետև սրտում՝ Շուշիում, թյուրքալեզու քոչվորական ջևանշիր ցեղախմբի սարընջալու ցեղի ներկայացուցիչ Փանահի ուժերի հաստատումը XVIII դարի կեսերին: Սա տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ պարսից շահ Նադիրի (1736-1747) սպանությունից հետո Իրանում կենտրոնական իշխանության անկայունության շրջան է սկսվում, և իրանական վերնախավի շրջանում հայկական մելիքությունների ու հոգևոր իշխանության նկատմամբ բարյացակամ քաղաքականությունը փոխվում է. եթե Նադիրը դրական վերաբերմունք էր ցուցաբերում հայ վերնախավի մեծ մասի նկատմամբ, ապա նրանից հետո վերստին գերիշխող է դառնում իսլամի գերակայության դիրքերից վարչարարության կազմակերպումը և բնակչության սոցիալ-իրավական կարգավիճակի կրոնադավանական

տարբերակումը: Նադիր շահի համար կարևոր էր ռազմաքաղաքական տեսանկյունից խնդրի դիտարկումը, քանի որ Արևելյան Հայաստանի հայկական վերնախավի մեծ մասը, հատկապես՝ Արցախի և Սյունիքի մելիքները, ի տարբերություն տարածաշրջանի մուսուլման պաշտոնյաների զգալի մասի (դիմադրություն ցուցաբերած բացառություններից էր, օրինակ՝ Գանձակի խանությունը), 1720-ական թթ. իրանական պետության ճգնաժամի ժամանակ դիմադրել են Օսմանյան կայսրության զինված ուժերի ներխուժմանը: Դա նշանակում էր, որ հայկական գործոնը հնարավորություն էր տվել իրանական պետությանը և անձամբ Նադիրին՝ վերադառնալու տարածաշրջանային քաղաքականության հարթակ և դուրս մղելու Օսմանյան կայսրությանը Այսրկովկասի մեծ մասից, հետևաբար նույն այդ հայկական գործոնն ամրապնդելը դառնում է Նադիրի տարածաշրջանային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը (Հովհաննիսյան, 2010, 67-76): Հարկ է նշել, որ Նադիրը ոչ բոլոր վայրերում էր նույն խրախուսական ուղեգիծը որդեգրել, և բացառություն էին կազմում, օրինակ, Աշոցքի գավառի սահմանային 31 բնակավայրերի գյուղապետները, որոնք օսմանյան բանակի ներխուժման ժամանակ, առաջնային հարվածի թիրախում լինելով, 1723 թ. ընդհանրական հնազանդության գիր էին ստորագրել և հպատակվել Օսմանյան կայսրությանը: Այս արարքի համար նրանք Նադիրի կողմից 1735 թ. հպատակների հետ բռնագաղթվել են Իրանի հյուսիսարևելյան մաս՝ Խորասան (Փափազյան, 1994, 197-198, 200-202):

1736 թ. Էրզրումի պայմանագրով վերականգնելով մինչև 1723 թ. օսմանյան բանակի կողմից Արևելյան Վրաստան ներխուժելը գոյություն ունեցած սահմանները՝ Նադիրը վերահաստատում է նաև Արևելյան Հայաստանում մինչև 1724 թ. եղած իրանական վարչակարգը, սակայն՝ որոշակի փոփոխություններով. ընդլայնվում են Արցախի, Գեղարքունիքի և այլ վայրերի հայ մելիքների իրավունքները, ինչը, բացի քաղաքական նշանակությունից, ժողովրդագրական տեսանկյունից ևս կարևոր հետևանքներ ուներ, քանի որ մելիքների իշխանության ներքո գտնվող տարածքները ժառանգական հողատիրությամբ էին տնօրինվում, իսկ այնտեղ գտնվող բնակչությունը մելիքների կողմից տնտեսական և ռազմաքաղաքական պաշտպանվածության իրավական մեխանիզմներով էր երաշխավորվում կենտրոնական իշխանությունների կողմից: Նման պայմաններում հայ բնակչությունը տեղում մնալու և հարաբերական խաղաղության պայմաններում բնականոն վերարտադրության լայն հնարավորություններ էր ստանում: Պետք է նկատի ունենալ, որ օսմանյան ներխուժման հետևանքով 1720-ական թթ. կեսերից սկսված ռազմական գործողությունները մարդկային զգալի կորուստների էին հանգեցրել Արցախում, իսկ տասնամյակի վերջից, համաձայն Ռուսական կայսրության զինված ուժերի արխիվային փաստաթղթերի, հայ հրամանատարության և զինվորության մի մասը, դժվարանալով շարունակել պայքարը թշնամական գերիշխող ուժերի դեմ, հեռացել է դեպի մերձկասպյան շրջաններ, որոնք այդ ժամանակ գտնվում էին ռուսական զորքերի վերահսկողության տակ (Армянское войско в XVIII веке, 1968, 115-117, 432):

Այդուհանդերձ, ինչպես արդեն նշեցինք, Նադիրի մահվանից հետո իրավիճակը կտրուկ փոխվում է: Արցախի պատմական ժողովրդագրության համար խիստ բացասական դեր է խաղում Փանահի ցեղախմբի հայտնվելը միջմելիքական վեճի կիզակետում: Նա նախ մելիք Շահնազարից ստանում է Շուշին, այնուհետև վերջինիս ամրացված բերդի շնորհիվ

հաջողությամբ պայքարում է Արցախի մյուս մելիքների դեմ: Փանահի և նրա որդու՝ Իբրահիմի գործողությունների հետևանքով հայկական մելիքությունների ռազմաքաղաքական կշիռը հետզհետե փոքրանում է, ինչը բացասաբար է ազդում Արցախի հայ բնակչության կացության վրա (առավել մանրամասն տե՛ս՝ Մաղալյան, 2007, 31-53; Մաղալյան, 2009, 87-112): Ա. Մաղալյանը առաջ բերելով աղբյուրագիտական զգալի նյութ, նշում է, որ, չնայած բոլոր դժվարություններին և փորձություններին, ընդհանուր զինական ներուժի նվազմանը, այդուհանդերձ «Արցախի մելիքներին հաջողվել է իրենց ռազմական կարողությունները պահպանել ընդհուպ մինչև մելիքությունների ժամանակաշրջանի ավարտը» (Մաղալյան, 2007, 53): Միաժամանակ առանձնապես դժվարանում է Արցախի հարավային շրջանների մելիքների հետագա գործունեությունը, որովհետև գործի էր դրվել նաև նրանց իսլամ պարտադրելու գործիքակազմը, որի միջոցով փորձ էր արվում գործընթացը տարածել նաև հպատակների ուղղությամբ: Այս ամենին գումարվում է նաև XVIII դարի վերջին տեղի ունեցած ևս մեկ արհավիրք՝ Աղա Մահմադ խանի հարձակումը, ինչի հետևանքով հատկապես տուժում են Արցախի մերձերասխյան և նախալեռնային շրջանները, որտեղ ինքնապաշտպանություն կազմակերպելը համեմատաբար բարդ էր: Այստեղից մելիքական ընտանիքների և նրանց հպատակ բնակչության գաղթը դեպի Արևելավրացական թագավորության հայկական գավառներ արձանագրված է ռուսական արխիվային փաստաթղթերում (Присоединение Восточной Армении к России: сборник документов, том I, 1972, 27, 29, 37-41, 122 ևն):

Նշված բոլոր գործընթացները պայմանավորել են Արցախում ժողովրդագրական այն իրավիճակը, որ XIX դարում արտահայտվում է տարբեր սուր դրսևորումներով: Դրանց մեջ կան առանձին խնդիրներ, որոնք այսօր ակտիվորեն կեղծվում և խեղաթյուրվում են ադրբեջանական պատմագիտական շրջանակների կողմից, հետևաբար անհրաժեշտ է չեզոքացնել նրանց կողմից առաջ մղվող որոշ թեզերը՝ ցույց տալով դրանց լիարժեք սնանկությունը: Սույն հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրության նպատակն է քննել, վերլուծել և լուսաբանել նշված ժամանակաշրջանում Արցախի պատմական ժողովրդագրության որոշ հարցեր, որոնք խեղաթյուրված ձևով են ներկայացվում ադրբեջանական պատմազեղծարարների կողմից: Անհրաժեշտ է նշել, որ խնդիր չենք դրել ներկայացնելու Արցախի ժողովրդագրական ամբողջական նկարագիրը XIX դարում և XX դարի սկզբին, ինչն անհնար է անել մեկ հոդվածի ներքո, այլ առանձնացրել ենք մի քանի կոնկրետ հարցեր՝ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Արցախի հայ բնակչության տեղաշարժերի խնդիրը, 1828 թ. Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրի հետևանքով պարսկահայերի վերաբնակեցմանը Արցախի առնչության ծավալների հարցը, Շուշիում տեղաբնիկ հայ բնակչության մեծամասնության խնդիրը, վանքապատկան հողատիրության ու ժողովրդագրության փոխառնչությունը Դաղիվանքի օրինակով և հարակից մի քանի հարցեր: Հաշվի առնելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են Ռուսական կայսրության վարչարարական համակարգի ներմուծմամբ և ընդլայնմամբ, օգտագործված սկզբնաղբյուրների մեծ մասը ռուսական վիճակագրական ժողովածուներ և հրատարակված փաստաթղթեր են: Պատմահամեմատական մեթոդի պատշաճ կիրառումն ապահովելու

համար բոլոր հնարավոր դեպքերում աշխատել ենք օգտագործել նաև այլընտրանքային աղբյուրներ:

Քննարկում և արդյունքներ: XIX դարի սկզբին Հայաստանը բաժանված էր Օսմանյան կայսրության և Իրանի միջև: Իրանահպատակ Արևելյան Հայաստանի տարածքը բաժանված էր Երևանի, Ղարաբաղի (Արցախի), Նախիջևանի, Գանձակի, Մակուի խանությունների, իսկ հյուսիսային տարածքները գտնվում էին Քարթլի-Կախեթի (Արևելավրացական) թագավորության և Շորագյալի (Շիրակի) կախյալ սուլթանության կազմում: Նշված տարածքների նկատմամբ հավակնություններ էր դրսևորում տարածաշրջանային քաղաքականության մեջ նոր դերակատարը՝ Ռուսական կայսրությունը: Հենց Ռուսաստանի, Օսմանյան կայսրության և Իրանի միջև փոխհարաբերություններն ու մրցակցությունն էին պայմանավորում XIX դարի առաջին երեսնամյակի ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում, այդ թվում՝ Հայաստանում: Ռազմաքաղաքական գործընթացներն իրենց որոշակի կնիքն էին թողնում նաև ժողովրդագրական իրավիճակի վրա՝ առաջ բերելով բնակչության միգրացիոն ակտիվ հոսքեր տարբեր ուղղություններով, իսկ առանձին դեպքերում պատճառ դառնում պատերազմի անմիջական հետևանքի՝ զանգվածային զոհերի առկայությանը:

XVIII դարի վերջին Արցախի մելիքների մի մասը տեղափոխվել էր Արևելավրացական թագավորության կազմում գտնվող Բոլնիսի, Լոռու հյուսիսային և այլ շրջաններ: Շ. Մկրտչյանը, մեջբերելով Ս. Էփրիկյանի տվյալները, պնդում է, որ հենց այս ժամանակ են Դադիվանքին մերձակա Խութ բնակավայրից շուրջ 300 ընտանիք հայեր հեռացել Երևանի խանության սահմաններ, որտեղից նրանց մեծ մասը հետո տեղափոխվել է ժամանակակից Շուլավեր բնակավայրի շրջան (Мкртчян, 1989, 35):

Թեև 1799 թ. Ռուսաստանի կայսր Պավել I-ի (1796-1801) տնօրինմամբ վրաց արքայի հպատակության տարածքներ վերաբնակված հայ մելիքները պետք է վայելեին իրավական բոլոր արտոնությունները, որ ժամանակին ունեցել են Արցախում, սակայն նոր տեղում սոցիալական փոխհարաբերությունների դաշտը նույնպես լարված էր, հատկապես՝ պղնձարդյունագործական աշխատանքներում ներգրավվել-չներգրավվելու հարցում. չէ՞ որ դրանից պիտի ազատվեին մելիքներին հպատակ արցախցի վերաբնակիչները, մի հանգամանք, որը, սակայն, չէր բխում վրաց թագի շահերից (Присоединение Восточной Армении к России: сборник документов, том I, 1972, 37, 122-123, 168, 194-196): Հետագայում նման լարվածությունը և 1804 թ. պատերազմական գործողությունների ծավալումը Գանձակի խանության, այնուհետև՝ Արցախի տարածքում, նոր միտումներ են առաջացնում մելիքական ընտանիքների շառավիղների և նրանց հպատակ վերաբնակիչների շրջանում՝ առաջ բերելով միգրացիոն նոր միտումներ:

1805 թ. ռուսական բանակը մտնում է Արցախ, և Իբրահիմ խանը որոշում է հպատակվել Ռուսաստանին: Ուշագրավ է, որ 2007 թ. Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ II-ի օրհնությամբ հրատարակված «Россия и ее «колонии». Как Грузия, Украина, Молдавия, Прибалтика и Средняя Азия вошли в состав России» ժողովածուում Արցախի միացումը Ռուսական կայսրությանը ներկայացված է Հայաստանին վերաբերող բաժնում, ընդ որում՝ այստեղ նույնիսկ ներառված է հայ մելիքների նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքով հայտնի Իբիրահիմ խանի հավատարմության երդման 1805

թ. մայիսի 14-ի փաստաթուղթը (Россия и ее «колонии», 2007, 400, 434-442)։ Նոր իրողությունների պայմաններում ի սկզբանե մեջտեղ են գալիս հետևյալ հարցերը՝ ի՞նչ կարգավիճակ է ունենալու «Ղարաբաղի խան» տիտղոս կրող անձը, ի՞նչ է տեղի ունենալու հայ մելիքների իրավունքների հետ, ի՞նչ լուծում պետք է ստանա Արցախից հեռացած բնակչության ճակատագրի հարցը, արդյոք երաշխավորվա՞ծ է հայ բնակչության անձն ու գույքը, թե՞ սպասվում է Երասխի աջ ափից իրանական ուժերի ներխուժում և ռուսական զորքերի հնարավոր դուրսբերում։ Այս բոլոր հարցերի ակտիվ քննարկումը երևում է ռազմական զեկուցագրերում և հայ մելիքների դիմումնագրերում, որոնք, որպես արխիվային նյութեր, հրապարակված են։ Այսպես օրինակ՝ 1805 թ. մայիսի 24-ին Շահնազարյանների մելիքական տան ներկայացուցիչը խնդրագրով դիմել է ռուսական բանակի գեներալ Պ. Ցիցիանովին, որպեսզի թույլ տա իր հպատակներից 90 տուն Բորչալուի գավառից տեղափոխվեն Ելիզավետպոլի գավառ (ստորագրված է՝ մելիք Ջիմշիդ մելիք Շահնազարեան, Присоединение Восточной Армении к России: сборник документов, том I, 1972, 310-311)։ 1805 թ. հուլիսի 1-ին Պ. Ցիցիանովի՝ Ռուսաստանի արտգործնախարար Ա. Չարտորիյսկիին ուղղված գրությունից պարզ է դառնում, որ նախկին Ղարաբաղի խանության տարածքում դեռևս գործում են Բաբա-խանի զինված ուժերը, որ իրանական կենտրոնի՝ Երևանի խանություն ուղարկված զորքերի հետ սպառնում են Երասխի մյուս ափ տեղափոխել Երևանի խանության հայ բնակչությանը (նույն տեղում, 316)։ Հետագայում ևս Արցախի տարածքը չէր դադարում զերծ մնալ ռազմական գործողությունների հետ առնչությունից, որոնցից մեկի ժամանակ մի քանի գյուղեր՝ իրենց ինչքով, բռնագաղթի են ենթարկվել դեպի Երասխի աջ ափ (Войны и население Юга России в XVIII – начале XXI в.: демографические процессы и последствия, 2019, 301)։ Ռուսական զինված ուժերի՝ տարածաշրջանում ամրապնդվելուն զուգընթաց նկատելի է դառնում Լոռուց դեպի Արցախին ավելի մոտ տարածքներ տեղափոխվելու մելիքների ցանկությունը։ Այսպես՝ 1806 թ. նոյեմբերի 15-ին Շահնազարյանների ընտանիքի մելիքը գրությամբ ռուսական հրամանատարությանը նորից խնդրում է թույլ տալ Բորչալուի գավառից Ելիզավետպոլի գավառ տեղափոխված իր հպատակ գյուղացիներին գյուղական բնակավայր տրամադրել։ Գրության մեջ մելիք Ջիմշիդ Շահնազարովը գրում է, որ ինքը, գեներալ Ցիցիանովի հրամանով, իր հպատակների մեծ մասին և սեփական ընտանիքը նախորդ տարի վերաբնակեցրել է Բորչալուի գավառից նորանվաճ Ելիզավետպոլ, իսկ ինքն անձամբ տեղափոխվել է Շուշիի բերդ և յուրային մարդկանցով օգտակար եղել այդտեղ տեղակայված ռուսական զինուժի հրամանատարությանը (Присоединение Восточной Армении к России: сборник документов, том I, 1972, 387)։ Նույն մելիքը մեկ այլ՝ 1806 թ. դեկտեմբերի 2-ին Լազարյան իշխանուհուն ուղղված գրության մեջ, որ ստորագրված է նաև Վիրահայոց թեմի առաջնորդ Հովհաննեսի կողմից, նկարագրում է, թե իր հայրը և բոլոր նախնիները եղել են Արցախի տիրակալները, իրենց ենթարկվել են նաև մուսուլմանները, ունեցել են սեփական զինուժ, սակայն Աղա Մահմադ խանի արշավանքներից հետո սկսված սովն ու հիվանդություններն ստիպել են, որ հայ մելիքներն ու նրանց ենթակա բնակչության մի մասը վերաբնակվեն Շիրվանում և Վրաստանում, հետևաբար առաջարկում է, ըստ էության, ժողովրդագրական քաղաքականության հետաքրքիր մի մոդել. «… если вы, мил. гос.! желаете, чтоб народ армянский совершенно избавлен был от ига варварскаго (варварского –

Մ. Մ.), чтоб собран он был в древнее свое отечество и чтоб имел готовые корпусы войск …, то испросите, дабы повелено было первое всем разсеявшимся (рассеявшимся – Մ. Մ.) и находящимся в странах ширванских и грузинских народам нашим возвратиться в свое отечество. Второе, чтоб на три года свободны они были от всех податей … Третие (Третье – Մ. Մ.), чтоб народ армянский не был под властию (властью – Մ. Մ.) магометан, ибо они никогда не могут сохранить верность свою и к империи всероссийской, но стараются день от дня уменьшить народ армянский, дабы удобнее им было употреблять злые умысли свои …» (նույն տեղում, 392-394)։ Մելիքը նաև չորրորդ կետով նշում է, որ անհրաժեշտ է զենքի համար նյութական միջոցներ տրամադրել հայերին, որ իրենք Արցախի հարավում՝ մինչև Երասխ գետ, ռուսական բանակի հետ միասին վերահսկեն սահմանը, ինչը լրացուցիչ խթան կդառնա հայրենի հողում ազգային կոնսոլիդացիայի ձևավորման համար (նույն տեղում, 393)։ Վերջինիս տրամաբանության մեջ է նաև 1807 թ. մարտի 18-ին գեներալ Ի. Գուդովիչին ուղղած նրա գրությունը, որտեղ, արձագանքելով ռուսական զորքի դուրս գալու վերաբերյալ ասեկոսեներին, խնդրում է, հայ բնակչության անվտանգությունն ապահովելու նկատառումից ելնելով, դուրս չբերել ռուսական զորքը Արցախից (նույն տեղում, 403-404)։ Հետաքրքրություն է ներկայացնում 1809 թ. հուլիսի 13-ին գեներալ Ա. Տորմասովի կողմից գրված մի զեկուցագիր, որտեղ նա նշում է, թե Բոլնիսից Արցախ տեղափոխված հայերին ցորենի բերքը հավաքելուց հետո անհրաժեշտ է վերադարձնել հետ, չթողնել տեղում։ Սա կարող է բացատրվել ավելի շատ լքված տարածքի տնտեսական թուլացումը թույլ չտալու, որքան ռազմաքաղաքական նկատառումներով, ինչը երևում է նրա կողմից նույն հարցով Մեհտի-ղուլի խանին գրված գրությունից (նույն տեղում, 522)։

1809 թ. հոկտեմբերի 19-ին Ա. Տորմասովի մեկ այլ գրության մեջ լուսաբանվում է մելիք Բաղիր բեկ Բեգլարովի (Բեգլարյանի) կողմից Արցախ վերաբնակվելու խնդրանքի հարցը, որտեղ նա ցանկություն էր հայտնում Բորչալուի գավառում բնակվող իր գյուղացիները վերաբնակվեն Ելիզավետպոլի օկրուգում (նույն տեղում, 535)։

Պատերազմի ավարտական փուլում իրանական հակահարձակման փորձերը հանգեցրել են մարդկային զոհերի։ Այդ մասին տեղեկանում ենք Ա. Տորմասովի՝ Ռուսաստանի ռազմական նախարար Մ. Բարկլայ-դը-Տոլիին ուղղված 1811 թ. մարտի 3-ի զեկուցագրից, որտեղ ասվում է, թե Երասխն անցնելով՝ հարձակվել են ռուսական դիրքերի և հայկական բնակավայրերի վրա՝ պատճառելով մարդկային կորուստներ, այդ թվում՝ հայերից 8 զոհ և 23 գերի (նույն տեղում, 555-556)։ Հարձակումների և զինուժի կուտակումների մասին նշվում է նաև ռուսական հրամանատարության այլ զեկուցագրերում (նույն տեղում, 581-590)։ 1812 թ. գործողությունները տեղափոխվում են արդեն Երասխի մյուս ափ, որի շնորհիվ հնարավոր է եղել մինչ այդ Ջաֆար-Կուլի աղայի և մուսուլման այլ զորականների կողմից Երասխի աջ ափ քշված հայ գյուղացիների վերադարձն Արցախ (նույն տեղում, 597-601, 613-615)։ Այդուհանդերձ, շուրջ երկու տասնամյակ շարունակված ռազմաքաղաքական վայրիվերումների պատճառով մերձերասխյան շրջանների զգալի մասը ամայացել էր, բնակչության մի մասն էլ բռնի տեղափոխվել էր Երասխի աջ ափ, տարածված էին նաև տարբեր հիվանդություններ, որոնցից նույնիսկ ռուսական ռազմակայաններում էին մահացության զանգվածային դեպքեր գրանցվում (նույն տեղում, 632)։

XIX դարի սկզբին իրանական իշխանության պայմաններում Արևելյան Այսրկովկասում գոյություն ունեին Գանձակի (մինչև 1804 թ.), Ղարաբաղի (մինչև 1805 թ.), Շաքիի (մինչև 1805 թ.), Շիրվանի (մինչև 1805 թ.), Բաքվի (մինչև 1806 թ.), Ղուբայի (մինչև 1806 թ.), Թալիշի (մինչև 1813 թ.) խանությունները, որոնց Ռուսական կայսրության կազմում տրվեց նույնանուն պրովինցիաների կարգավիճակ՝ այնուհետև վերաձևավորվելով նահանգների: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին, կնքվեց Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, որով իրավականորեն հաստատվեց Վրաստանի մեծ մասի (Քարթլի-Կախեթի կամ Արևելավրացական թագավորության), Այսրկովկասի արևելյան մասի և Արևելյան Հայաստանի մի քանի երկրամասերի (Արցախի, Շիրակի, Լոռի-Փամբակի, Տավուշի, Զանգեզուրի, Կապանի) անցումը Ռուսաստանին (Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (քարտեզ), 2008, 27): Ղարաբաղի խանությունը և խանական ամբողջ վարչակարգը լուծարվեցին 1822 թ., սակայն տարածաշրջանում նոր վայրիվերումներ էին սպասվում:

1826 թ. հուլիսի 16-ին, առանց պատերազմ հայտարարելու, Իրանի թագաժառանգ Աբաս-Միրզայի գլխավորած պարսկական 60000-ոց բանակն անցավ Երասխ գետը և ներխուժեց Արցախ: Առանձին ջոկատներ շարժվեցին դեպի Բաքու, Լենքորան, Նուխի, Ղուբա, իսկ Երևանի խանի զորքերը հարձակվեցին Շիրակի և Փամբակի ուղղություններով: Բոլոր այս գործողություններն առաջ էին բերում բնակչության զանգվածային տեղաշարժեր: Արցախի ուղղությամբ շարժվող պարսկական բանակը հուլիսի 26-ին պաշարեց Շուշիի բերդը: Շրջակայքի 22 հայկական գյուղերից շուրջ 1500 հայեր ապաստանեցին բերդում և տեղի 1700 հոգանոց ռուսական կայազորի հետ դիմեցին ինքնապաշտպանության (ռազմական գործողությունների մասին տե՛ս Григорян, 1959; Բարխուդարյան, Ոսկանյան, 1978): Այս հարձակման ուղղակի հետևանքը Արցախի հարավից՝ Երասխի հովտի դաշտային-կիսաանապատային շրջանից բնակչության հարկադրված շարժն էր դեպի հյուսիս՝ ավելի բարձրալեռնային տեղանքներ: Թեև հոկտեմբերին իրանական զորքերն ամբողջությամբ դուրս էին մղվել Արցախից, Շիրակից, Փամբակից և Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցած մնացյալ տարածքներից, սակայն բնակչության տեղաշարժերն իրենց կնիքն էին թողնում ժողովրդագրական ընդհանուր պատկերի վրա:

Պատերազմի ավարտին՝ 1828 թ. փետրվարի 10-ին, ստորագրվում է Թուրքմենչայի պայմանագիրը, որի 15-րդ հոդվածը հնարավորություն էր տալիս իրանահպատակներին վերաբնակվելու Ռուսական կայսրությանն անցած տարածքներ: Ադրբեջանական պատմազեղծարարության տարածված թեզերից է այն, որ իբր Արցախում հայերը հայտնվել են միայն այս վերաբնակեցման արդյունքում, ինչը կատարյալ սուտ և կեղծիք է: Դա տրամաբանորեն պարզ է ոչ միայն Արցախի հայկական մի քանի հազարամյա մշակութային ժառանգության առկայության հանգամանքի շնորհիվ, սակայն հաստատվում է նաև պարսկահայերի վերաբնակեցման վիճակագրությամբ, քանի որ Արցախը պարսկահայերի ամենաքիչ հոսքեր ընդունած ռուսահպատակ հայկական երկրամասերից էր:

Վերաբնակեցման ամբողջ գործընթացն սկսվել է 1828 թ. մարտին, երբ Թավրիզի հայերի մի խումբ առաջինը վերաբնակվում է Արևելյան Հայաստանում: Մեկ ամիս անց գեներալ Ի. Պասկևիչի՝ ռուսական գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչին ուղղված մի զեկուցագրում ասվում է, որ արդեն 279 ընտանիք հաստատվել է Արցախում և 948 ընտանիք

էլ՝ «Երևանի մարզում», այսինքն՝ Հայկական մարզում: Նույն զեկուցագրում նա հայտնում է, թե, գնդապետ Լ. Լազարևի վստահեցմամբ, վերաբնակիչների ընդհանուր թիվը կարող է հետագայում անցնել 5 000-ից (Григорян, 1959, 159): Զ. Գրիգորյանի, Մ. Դարբինյանի, Ռ. Մելիք-Սարկիսյանի, Հ. Սարգսյանի և այլոց համապատասխան ուսումնասիրություններում հանգամանալիորեն ներկայացված են տարբեր աղբյուրներում առկա վիճակագրական տվյալները պարսկահայ վերաբնակիչների թվաքանակի մասին: Ի մի բերելով այդ տվյալները՝ պարզ է դառնում, որ Թավրիզի, Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիո, Արդաբիլի, Մարաղայի և այլ շրջաններից Արևելյան Հայաստան վերաբնակվել է 8249 հայ ընտանիք (43000-45000 մարդ) (Մալխասյան, Արևելյան Հայաստանում 1828-1832 թթ. հայ բնակչության էթնիկական գերակշռության վերականգնման խնդրի շուրջ, 2015, 86, 88): Այս թվից ավելի քան 700 ընտանիքներ (շուրջ 4000 մարդ) վերաբնակեցվել են Արցախում (Արցախում հաստատվածների մեջ գերակշռում էին Մարաղայի շրջանից վերաբնակիչները), սակայն նրանցից 300-ը կարճ ժամանակ անց վերադարձել է Երասխից հարավ կամ հեռացել կայսրության այլ վարչամիավորներ՝ ելնելով ստեղծված բնակարանային, պարենային և աշխատանքային խնդիրներից, ինչպես նաև ենթարկվելով Ռուսական կայսրության սահմաններում գործող մուսուլման կալվածատերերի և վաչկատուն ցեղերի ճնշումներին, իսկ մնացածների զգալի մասը (ավելի քան 1000 մարդ) զոհ է գնացել ժանտախտի համաճարակին (Саркисян, 2002, 60; Мелик-Саркисян, 1979, 42-55; Դարբինյան, 1973, 17-20): Հետաքրքիր է, որ գիտագործնական և գաղափարական նկատառումներով և Ռուս ուղղափառ եկեղեցու հովվապետի օրհնությամբ հրատարակված «Россия и ее «колонии». Как Грузия, Украина, Молдавия, Прибалтика и Средняя Азия вошли в состав России» գրքում պարսկահայերի վերաբնակեցման հիմնախնդրի վերաբերյալ մանրամասն լուսաբանման մեջ Արցախն ընդհանրապես չի նշվում վերաբնակիչների հիմնական ուղղությունների շարքում (Россия и ее «колонии», 2007, 424-427):

Ռուսական կայսրության վարչական համակարգի ձևավորումից, խանական վարչակարգի մնացուկների վերացումից և միաժամանակ նաև մելիքական համակարգի վերջին դրսևորումների՝ հողատիրության համակարգից լիակատար անջատումից հետո ժողովրդագրական տեղաշարժերն ավելի շատ սկսում են փոխկապակցվել Ռուսական կայսրության արդյունաբերացման միտումների, մասնավորապես՝ Այսրկովկասում արդյունաբերական կենտրոնների ձևավորման գործընթացի հետ: Հետևապես XIX դարի կեսերից Արցախից նկատվում է հայ բնակչության որոշակի հոսք դեպի Ռուսական կայսրության արդյունաբերական կենտրոններ: Միտումն ավելի մեծ ծավալներ է ստանում այն ժամանակ, երբ Բաքուն վերածվում է տարածաշրջանի նավթարդյունաբերական կենտրոնի, որն իր ուղղությամբ է ձգում աշխատանքային որակյալ կադրերին: Բացի այդ՝ XIX դարի երկրորդ կեսին Արցախից, Սյունիքից և Նախիջևանից նկատվել է հայերի որոշակի հոսք դեպի Միջին Ասիա՝ Ռուսական կայսրության կողմից նոր յուրացվող և ապագայում ձևավորվելիք Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան պետական կազմավորումների տարածք (Մալխասյան, Հայկական համայնքները Միջին Ասիայում և Ղազախստանում, 2015, 188-189): Դա պայմանավորված էր Ռուսական կայսրության կողմից այդ տարածքների տնտեսական յուրացման և ենթակառուցվածքների ստեղծման քաղաքականությամբ:

Ռուսական կայսրության կազմում հայտնվելուց և հատկապես ցարական իշխանության կողմից եկեղեցական կանոնադրության ընդունումից (1836 թ.) հետո 1830-ական թթ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի վերաձևավորման գործընթացում կարևոր էին Արցախի (Ղարաբաղի) թեմում ընթացող գործընթացները: Հոգևոր դասի կողմից փորձ էր արվում վերականգնել վանքապատկան հողերի իրավական կարգավիճակը, լուծել պատկանելության հետ կապված բոլոր խնդիրները և ապահովել ծխական համայնքների ու վանքային տնտեսությունների լիարժեք գործունեությունը: Այստեղ հետաքրքիր է Շուշին առաջնորդանիստ դարձնելը և հատկապես Դաղիվանքի կալվածքների խնդիրը, որը դեռևս Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի գահակալության շրջանում (1763-1780) գտնվում էր Հայոց Եկեղեցու, անգամ՝ հենց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ոչ թե Գանձասարի կաթողիկոսության իրավասության տակ: Սուր էր դրված կալվածքների վերականգնման խնդիրը, քանի որ հայերի տեսակար կշիռը զգալիորեն նվազել էր: Հայոց Եկեղեցու կողմից փորձ էր կատարվում եկեղեցական կալվածքների տնօրինման հարցը գործարկել նաև որպես ժողովրդագրական քաղաքականության գործիքակազմի մաս, մասնավորապես՝ կալվածքները սոցիալ-տնտեսական կարիքների համար զբաղեցրած քրդական և թյուրքալեզու ցեղերից ռուսական իշխանությունների վարչական լծակների միջոցով ձևակերպելու որպես վարձակալություն կամ առանձին դեպքերում ընդհանրապես հեռացնելու տարածքները զբաղեցրած ցեղախմբերին (Karapetian, 2001, 76-77; Մաղալյան, 2007, 152-153): Պատմական Ծարի երկրամասի բնակչության ընդամենը մի փոքր մասը մնացած հայ բնակչության համար վանքապատկան հողատիրության պահպանումը եկեղեցական նվիրապետության համակարգի և կալվածատիրության ներքո բարդագույն խնդիր էր, ինչը, սակայն, մասնակի հաջողվեց պահպանել մինչև Ռուսական կայսրության փլուզում:

Ընդհանուր առմամբ՝ Ռուսական կայսրության կազմում Արցախի թեմում Առաջին աշխարհամարտի մեկնարկից առաջ գործում էին 222 եկեղեցիներ՝ 188 հոգևորականներով, 206768 ծխականներով, 224 հայկական համայնք-բնակավայրերով (Արարատ, 1914, 637, հղումն ըստ՝ Нагорный Карабах: историческая справка, 1988, 19):

Ադրբեջանական հայտնի կեղծ թեզերից է նաև այն, որ իբրև թե հայերը Շուշիում երբևէ մեծամասնություն չեն կազմել, մինչդեռ Ռուսական կայսրության ժամանակաշրջանում հայերը տեսակարար կշռով մշտապես գերազանցել են մուսուլմաններին: 1897 թ. Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով՝ Շուշի քաղաքում բնակվել է 14420 հայ (բնակչության 55.8%-ը), իսկ Շուշիի գավառակի գյուղերը գրեթե բացառապես հայաբնակ են եղել (Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Распределение населения по родному языку и уездам: Шушинский уезд): Շուշիի հայ բնակչությունը տուժել է 1905 թ. թաթարական հարձակումներից, բայց նույնիսկ այդ պայմաններում ռուսական պաշտոնական վիճակագրությամբ 1913 թ. նրա թվաքանակը հասել է 22160-ի (բնակչության 52.3%-ը) (Обзор Елизаветпольской губернии за 1913 год, 1915, Приложение №1): Ընդհանուր առմամբ՝ Շուշիի բնակչության թվի աճը հանգեցնում է նրան, որ այն դառնում է Հարավային Ռուսաստանի (ներառյալ Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի հարավի, Ղրիմի և Բեսարաբիայի տարածքները) ամենամարդաշատ

քաղաքներից մեկը՝ 1840 թ. լինելով 30-րդը, իսկ 1867 թ.՝ 20-րդը (Войны и население Юга России в XVIII – начале XXI в., 2019, 736-737):

1917 թ. սկզբի դրությամբ հրատարակված ռուսական «Кавказскій календарь»-ի (Тифлисъ, 'Гипографія Канцеляріи Наместнпка Е. И. В. на Кавказъ, 1916, 190-196) վիճակագրության մեջ հայերի թիվը հասել է 23400-ի (բնակչության 53.3%-ը): 1918 թ., ավելի ինտենսիվ՝ 1919 թ. (քաղաքի հայկական թաղամասի և Ղայբալիշեն գյուղի բնակչության նկատմամբ) և հատկապես 1920 թ. մարտի 22-26-ին հայերի զանգվածային կոտորածների հետևանքով Շուշիի գավառի հայ բնակչությունը կորցրել է 25000-30000 մարդ, հետևաբար զիջել է մեծամասնությունը քաղաքում, բայց գյուղերում շարունակել է կեսից ավելին լինել: Այս բոլոր փաստերը հիմնավորապես ներկայացվել են 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Շուշիի բնակչության ազգային կազմի մասին Հայաստանի պատմագետների ընկերակցության հայտարարության մեջ (Պատմաբաններն իրենց մտահոգությունն են հայտնում Շուշիի վերաբերյալ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հնչեցրած մտքերի առնչությամբ, 28.01.2021): Ի դեպ, Շուշիում 1920 թ. մարտին հայ բնակչության զանգվածային ոչնչացման մասին վկայում է անգամ բոլշևիկյան վարչակազմի կարկառուն ներկայացուցիչներից ՌԿԿ կենտկոմի Կովկասյան բյուրոն գլխավորած Ս. Օրջոնիկիձեն, ում հոդվածների և ելույթների ընտրանում ստալինյան իշխանության պայմաններում 1945 թ. հրատարակվել են հետևյալ տողերը. «Красивый армянский город был разрушен, разгромлен до основания, а в колодцах мы увидели трупы женщин и детей» (Орджоникидзе, Избранные статьи и речи, М., 1945, 422, հղումն ըստ՝ Войны и население Юга России в XVIII – начале XXI в., 2019, 492):

Շուշի հայության ողբերգական ճակատագրի հանգուցալուծումից հետո 1921-1923 թթ. Արցախի կարգավիճակի խնդրի ոչ արդարացի լուծման խորհրդային մոդելը հիմնավորվել է ազգային հարցի կարգավորման անհեթեթ ձևակերպումներով. «На основе ленинско-сталинской национальной политики был успешно разрешён национальный вопрос. 7 июля 1923 по воле народа нагорная часть Карабаха была провозглашена автономной областью в составе Азербайджанской ССР. Это явилось важным шагом в укреплении дружбы азербайджанского и армянского народов, в деле полной ликвидации межнациональной розни и воспитания народных масс в духе пролетарского интернационализма» (Большая советская энциклопедия, второе издание, том 29, 1954, 33): Ինչպես ցույց է տվել ժամանակը, Խորհրդային Ադրբեջանի՝ հայերի տեսակարար կշռի նվազմանն ուղղված ազգային քաղաքականությունը ցցուն կերպով արտահայտում էր այն փաստը, որ ազգային հարցը սխալ մոդելով է «կարգավորվել»:

Շուշիում բնակչության ազգային կազմի փոփոխության պատմական հետագա ազդեցությունը գնահատելու համար ստիպված ենք մի փոքր դուրս գալ հոդվածում նախատեսված ժամանակագրական շրջանակից ու ցույց տալ մինչ մեր օրերը քաղաքի բնակչության էթնիկ կազմը և թվաքանակի շարժընթացը: Այսպես՝ 1939 թ. ԽՍՀՄ մարդահամարով հայերի թվաքանակը քաղաքում հասել է շուրջ 1500-ի (բնակչության 27.2%-ը), իսկ գյուղական բնակչության մեծամասնությունը շարունակում էին կազմել հայերը: Այդուամենայնիվ, 1960-ական թթ. սկզբից Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները գործուն քայլեր են ձեռնարկել քաղաքը վերջնականապես

հայաթափելու և հայկական գյուղերի էթնիկ դիմագիծը փոխելու ուղղությամբ, 5 գյուղեր հետևողականորեն հայաթափվել են: ԽՍՀՄ 1970 և 1979 թթ. մարդահամարների տվյալներով Շուշիում համապատասխանաբար 1540 (17.7%) և 1410 (13.1%) հայ է բնակվել: Շուրջ քառորդ դարի ընթացքում շարունակված քաղաքականության եզրագիծը ԽՍՀՄ փլուզման շրջանում էր. 1988 թ. բռնի տեղահանվել է քաղաքի հայ բնակչությունը, որ արդեն հասնում էր շուրջ 2000-ի, իսկ հաջորդ տարի նույն մոտեցումը իրագործվել է Մեծշեն, Հինշեն, Եղցահող և այլ գյուղերի հայերի նկատմամբ, որոնք ամբողջությամբ հայաբնակ էին: Հենց այս գործողություններով է նվազագույնի հասցվել հայերի տեսակարար կշիռը Շուշիի շրջանում, և Ադրբեջանի պետական այրերի կողմից 1989 թ. ԽՍՀՄ մարդահամարին հղվող գրեթե ամբողջապես ադրբեջանաբնակ ցուցանիշը միայն այդ գործողությունների արդյունքում էր, իսկ խաղաղ պայմաններում նման պատկեր երբևէ չի եղել: 1992 թ. քաղաքի և ամբողջ շրջանի լիակատար ազատագրումից հետո վերը նշված գյուղեր և քաղաք հայ բնակչությունը վերադարձել է, քաղաքում հաստատվել են նաև Ադրբեջանական ԽՍՀ-ից բռնագաղթի ենթարկված մեր հայրենակիցներ և Արցախի այլ վայրերից հայ վերաբնակիչներ (Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994) հանրագիտարան, 2004, 527, 535, 537): 1992-2020 թթ. քաղաքի հայ բնակչության թվաքանակն աճել է և, համաձայն Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից պատերազմից մի քանի շաբաթ առաջ ամփոփված ընթացիկ վիճակագրության, 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ հասել շուրջ 4300-ի՝ 1979 թ. համեմատ լինելով երեք անգամ ավելին: Տեսակարար կշռի մասին խոսելիս մենք պետք է առաջնորդվենք ոչ թե Ադրբեջանի համար ելակետ հանդիսացող 1989 թ. մարդահամարի տվյալներով, որ սովորական պայմաններում չի հաշվառվել, այլ 2020 թ. նախապատերազմական ընթացիկ վիճակագրությամբ՝ 2015 թ. Արցախի մարդահամարի հաշվարկային հիմքով, երբ ունեինք փաստացի բնակվող հայ բնակչություն (2015 թ. մշտական բնակչություն՝ 4064, առկա՝ 4080, իսկ նախորդ՝ 2005 թ. մարդահամարով՝ համապատասխանաբար 3105 և 3191 բնակչություն) (Перепись населения НКР 2015, Таблица 1.1. Наличное и постоянное население административно-территориальных единиц НКР (городское, сельское) по результатам переписей населения НКР 2005 и 2015 гг. и по полу): Ի դեպ, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը, որոնց մի մասը վերը թվարկել ենք, այս պահին էլ Արցախի Պաշտպանության բանակի և ՌԴ խաղաղապահական ուժերի վերահսկողության գոտում են մնացել, հայաբնակ են և Բերձորի (Լաչինի) միջանցքին միանալով՝ Արցախը ՀՀ-ին կապող ճանապարհի ողնաշարն են կազմում:

Եզրակացություններ: Այսպիսով՝ Արցախում XIX դարում և XX դարի սկզբին տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացներն ունեցել են տարբեր դրսևորումներ: Դեռևս XVIII դարի կեսերից Արցախում նկատվող ակտիվ միգրացիոն գործընթացները նոր դրսևորումներ են ստացել ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, մասնավորապես՝ տեղի են ունեցել հայ բնակչության տեղաշարժեր նախալեռնային և դաշտային հատվածներից դեպի լեռնագավառներ: Կատարված ուսումնասիրության շրջանակում քննելով նշված ժամանակաշրջանում Արցախի պատմական ժողովրդագրության մի քանի առանցքային հարցեր՝ հանգել ենք եզրակացության, որ դեռևս XVIII դարի վերջից նախ տեղական Իբրահիմ խանի, ապա Աղա Մահմադ խանի

արշավանքների պատճառով Արցախից ակտիվ արտագաղթի գործընթացից հետո XIX սկզբին ակտիվ տեղաշարժերը շարունակվել են, սակայն բոլորովին այլ իրողությունների դրսևորմամբ: Մի կողմից նկատելի են ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Արցախի հարավային շրջանների հայ բնակչության զանգվածային գերեվարում-բռնագաղթերի դեպքեր դեպի Երասխի աջ ափ, իսկ մյուս կողմից՝ ռուսական բանակի հաջողություններին համընթաց նշմարելի է Քարթլի-Կախեթի թագավորության սահմաններ տեղափոխված հայ մելիքների՝ դեպի Ելիզավետպոլի գավառ, այնուհետև՝ Արցախ վերադառնալու միտումը: Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ վերստին նկատվել են միգրացիոն հոսքեր, մասնավորապես՝ Արցախի հարավային շրջաններից դեպի լեռնագոտիներ: Ուշագրավ է, որ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով պարսկահայերի վերաբնակեցումը շատ փոքր չափով է առնչվել Արցախի տարածքին և առանձնապես չի ազդել տեղի բնակչության թվաքանակի կտրուկ փոփոխության ուղղությամբ: Դարի կեսերից նկատելի է դարձել Արցախից հայ բնակչության արտադրողական ուժերի ակտիվ միգրացիա դեպի Ռուսական կայսրության արդյունաբերական կենտրոններ, ինչպես օրինակ՝ նավթարդյունաբերության ձևավորվող կենտրոն Բաքու, իսկ Շուշին վերածվում է մշակութային և արդյունագործական կարևոր կենտրոնի, որտեղ տեղաբնիկ հայ բնակչությունը կազմում էր կեսից ավելին: Հայ հոգևոր իշխանությունները փորձում էին երկրամասում տեր կանգնել նաև վանքապատկան հողատիրության իրենց հնամենի իրավունքներին, ինչը նաև ժողովրդագրական խնդիր էր լուծում, քանի որ առնվազն փորձ էր արվում Դադիվանքի և այլ վանքերի հողերի սպասարկման անհրաժեշտությամբ տվյալ տարածքներում որոշակի կայուն թվաքանակով հայ բնակչություն պահպանելուն ուղղված գործուն ջանքեր գործադրել և հեռու պահել կիսաքոչվոր ցեղերին: XIX դարավերջին և XX դարասկզբին առնչվող հարցերից կարևոր է, որ Ռուսական կայսրության առաջին մարդահամարի (1897 թ.) և հետագա վիճակագրական հրապարակումների տվյալները ցույց են տալիս, որ հայերը Շուշիում մեծամասնություն են կազմել:

Գրականության ցանկ

1. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (քարտեզ) 2008, կազմեց՝ Բ. Հարությունյանը, մասշտաբ՝ 1:1700000, «Հայաստանի պատմության ատլաս», մաս Բ, Եր., Մակմիլան Արմենիա հրատ., էջ 27:
2. **Բարխուդարյան Վ., Ոսկանյան Վ. (1978),** Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Եր., ԳԱ հրատ., 254 էջ:
3. **Դարբինյան Մ. (1973),** Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828-1829 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 8, էջ 12-22:
4. **Հովհաննիսյան Պ. (2010),** Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ), Եր., ԵՊՀ հրատ., 116 էջ:
5. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994) հանրագիտարան 2004, Եր., Հայկական հանրագիտարան հրատ., 864 էջ:

6. **Մալխասյան Մ. (2015),** Հայկական համայնքները Միջին Ասիայում և Ղազախստանում, «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Եր., ԵՊՀ հրատ., էջ 183-192:
7. **Մալխասյան Մ. (2015),** Արևելյան Հայաստանում 1828-1832 թթ. հայ բնակչության էթնիկական գերակշռության վերականգնման խնդրի շուրջ, «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Եր., ԵՊՀ հրատ., էջ 70-92:
8. **Մաղալյան Ա. (2007),** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., Գիտություն հրատ., 325 էջ:
9. **Մաղալյան Ա. (2009),** Արցախի մելիքությունները և Ղարաբաղի խանության ծագումը, «Հայոց պատմության հարցեր», թիվ 10, էջ 87-112:
10. Պատմաբաններն իրենց մտահոգությունն են հայտնում Շուշիի վերաբերյալ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հնչեցրած մտքերի առնչությամբ, Հայաստանի պատմագետների ընկերակցության հայտարարություն 28.01.2021, http://www.armin.am/am/news/233 15.05.2022
11. **Փափազյան Հ. (1994),** Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, «Բանբեր Մատենադարանի», թիվ 16, էջ 197-213:
12. Армянское войско в XVIII веке: из истории армяно-русского военного содружества (исследования и документы) 1968, подготовил к изданию А. Н. Хачатрян, Ер.: Издательство АН Армянской ССР, 476 с.
13. Большая советская энциклопедия, второе издание 1954, том 29, главный редактор – Б. А. Введенский, М.: Государственное научное издательство «Большая советская энциклопедия», 632 с.
14. Войны и население Юга России в XVIII – начале XXI в.: демографические процессы и последствия 2019, М.: Политическая энциклопедия, 767 с.
15. **Григорян З. (1959),** Присоединение Восточной Армении к России (в начале XIX века), М.: Соцэкгиз, 184 с.
16. «Кавказский календарь» 1917, Тифлисъ, 'Типографія Канцеляріи Наместнпка Е. И. В. на Кавказъ, 1916, 1075 с. + 98 с.
17. **Мелик-Саркисян Р. (1979),** Переселение армян из Персии в Восточную Армению в 1828-1829 годах, «Вестник Ереванского университета», № 2, с. 42-55.
18. **Мкртчян Ш. (1989),** Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, второе издание, Ер.: Издательство «Парберакан», 360 с.
19. Нагорный Карабах: историческая справка 1988, Редакторы – Г. А. Галоян, К. С. Худавердян, Ер.: Издательство АН Армянской ССР, 96 с.
20. Обзоръ Елисаветпольской губерніи за 1913 годъ, 1915, Тифлисъ: Изданіе Елисаветпольскаго Губернскаго Статистическаго Комитета, Приложение № 1, 85 с. + Приложения
21. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Распределение населения по родному языку и уездам: Шушинский уезд, http://www.demoscope.ru/weekly/ssp/emp_lan_97_uezd.php?reg=397 18.08.2022
22. Перепись населения НКР 2015, Таблица 1.1. Наличное и постоянное население административно-территориальных единиц НКР (городское, сельское) по результатам переписей населения НКР 2005 и 2015 гг. и по полу, 2016, http://stat-nkr.am/files/publications/2016/Mardahamar_2015_rus/MAS_2/1_1_45_46.pdf 05.07.2022

23. Присоединение Восточной Армении к России: сборник документов 1972, том I (1801-1813), редактор: академик АН Арм. ССР Ц. П. Агаян, Ер.: Издательство АН Армянской ССР, 716 с.
24. Россия и ее «колонии». Как Грузия, Украина, Молдавия, Прибалтика и Средняя Азия вошли в состав России 2007, М.: Издательство ДАРЪ, 576 с.
25. **Саркисян Г. 2002,** Население Восточной Армении в XIX – начале XX в., Ер.: Издательство "Гитутюн" НАН РА, 212 с.
26. **Karapetian S. 2001,** Armenian Cultural Monuments in the Region of Karabakh, RAA Scientific Researches, Book III, Yerevan: "Gitutiun" Publishing House of NAS RA, 232 p.

REFERENCES

1. Arevelyan Hayastani miacowmy' R'owsastanin (qartez) 2008, kazmec B. Harowt'yownyany', masshtab 1:1700000, «Hayastani patmowt'yan atlas», mas B, Yerevan, Makmilan Armenia hrat., e'j 27: (in Armenian) Accession of Eastern Armenia to Russia (map) 2008, compiled by B. Harutyunyan, scale: 1:1700000, "Atlas of the History of Armenia", part B, Yerevan, Macmillan Armenia ed., p. 27.
2. **Barxowdaryan V., Oskanyan V. (1978),** Hay-r'owsakan patmakan kapery' yev Arevelyan Hayastani miacowmy' R'owsastanin, Yerevan, GA hrat., 254 e'j: (in Armenian) Barkhudaryan V., Voskanyan V. 1978, Armenian-Russian Historical Ties and the Accession of Eastern Armenia to Russia, Yerevan, GA ed., 254 pages.
3. **Darbinyan M. (1973),** Parskahayeri gaght'y' yev nranc bnakecowmy' (1828-1829 t't'.), «Lraber hasarakakan gitowt'yownneri», t'iv 8, e'j 12-22: (in Armenian) Darbinyan M. 1973, Migration of Persian Armenians and Their Resettlement (1828-1829), "Bulletin of Social Sciences", No. 8, pp. 12-22.
4. **Hovhannisyan P. (2010),** Hay azatagrakan sharjhowmnery' (XV dari kes – XVIII dari verj), Yerevan, EPH hrat., 116 e'j: (in Armenian) Hovhannisyan P. 2010, The Armenian Liberation Movements (Middle of the 15th Century - End of the 18th Century), Yerevan, YSU ed., 116 pages.
5. Gharabaghyan azatagrakan paterazm (1988-1994) hanragitaran 2004, Yerevan, Haykakan hanragitaran hrat., 864 e'j: (in Armenian) The Karabakh War of Liberation (1988-1994) Encyclopedia 2004, Yerevan, Armenian Encyclopedia ed., 864 pages.
6. **Malkhasyan M. (2015),** Haykakan hamaynqnery' Mijin Asiayowm yev Ghazaxstanowm, «Patmajhoghovrdagrakan owsowmnasirowt'yownner», Yerevan, EPH hrat., e'j 183-192: (in Armenian) Malkhasyan M. 2015, The Armenian Communities in Central Asia and Kazakhstan, "Historical-Demographic Research", Yerevan, YSU ed., pp. 183-192.
7. **Malkhasyan M. (2015),** Arevelyan Hayastanowm 1828-1832 t't'. hay bnakchowt'yan e't'nikakan gerakshr'owt'yan verakangnman xndri showrj, «Patmajhoghovrdagrakan owsowmnasirowt'yownner», Yerevan, EPH hrat., e'j 70-92: (in Armenian) Malkhasyan M. 2015, On the Issue of Restoring the Ethnic Dominance of the Armenian Population in Eastern Armenia in 1828-1832, "Historical-Demographic Research", Yerevan, YSU Publishing House, pp. 70-92.
8. **Maghalyan A. (2007),** Arcaxi meliqowt'yownnery' & meliqakan tnery' XVII-XIX dd., Yerevan, Gitowt'yown hrat., 325 e'j: (in Armenian) Maghalyan A. 2007, The Principalities and Melikdoms of Artsakh in the XVII-XIX Centuries, Yerevan, Gitityun Publishing House, 325 pages.

9. **Maghalyan A. (2009),** Arcaxi meliqowt'yownnery' yev Gharabaghi xanowt'yan c'agowmy', «Hayoc patmowt'yan harcer», t'iv 10, e'j 87-112: (in Armenian) Maghalyan A. 2009, The Principalities of Artsakh and the Origins of the Khanate of Karabakh, "Questions of Armenian history", No. 10, pp. 87-112.
10. Patmabannern irenc mtahogowt'yownn en haytnowm Showshii veraberyal HH varchapet N. P'ashinyani hnchecrac' mtqeri ar'nchowt'yamb, Hayastani patmagetneri y'nkerakcowt'yan haytararowt'yown 28.01.2021, http://www.armin.am/am/news/233 15.05.2022 (in Armenian) Historians Express Their Concern regarding the Thoughts Expressed by the RA Prime Minister N. Pashinyan about Shushi. Statement of the Association of Historians of Armenia, 28.01.2021.
11. **P'ap'azyan H. (1994),** Nor nyowt'er Arevelyan Hayastanowm t'owrqakan ishxanowt'yownneri harkayin qaghaqakanowt'yan veraberyal, «Banber Matenadarani», t'iv 16, e'j 197-213: (in Armenian) Papazyan H. 1994, New Materials on the Tax Policy of the Turkish Authorities in Eastern Armenia, "Banber Matenadarani", No. 16, pp. 197-213.
12. Armjanskoe vojsko v XVIII veke: iz istorii armjano-russkogo voennogo sodruzhestva (issledovanija i dokumenty) 1968, podgotovil k izdaniju A. N. Hachatrjan, Yerevan: Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 476 s. (in Russian) The Armenian Army in the 18th Century: from the History of the Armenian-Russian Military Alliance (Research and Documents) 1968, Prepared for Publication by A. N. Khachatryan, Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 476 p.
13. Bol'shaja sovetskaja jenciklopedija, vtoroe izdanie 1954, tom 29, glavnyj redaktor – B. A. Vvedenskij, M.: Gosudarstvennoe nauchnoe izdatel'stvo «Bol'shaja sovetskaja jenciklopedija», 632 s. (in Russian) The Great Soviet Encyclopedia, second edition 1954, volume 29, editor-in-chief: B. A. Vvedensky, M.: State Scientific Publishing House "The Great Soviet Encyclopedia", 632 p.
14. Vojny i naselenie Juga Rossii v XVIII – nachale XXI v.: demograficheskie processy i posledstvija 2019, M.: Politicheskaja jenciklopedija, 767 s. (in Russian) Wars and the Population of the South of Russia in the 18th - early 21st Centuries: Demographic Processes and Consequences 2019, M.: Political Encyclopedia, 767 p.
15. **Grigorjan Z. (1959),** Prisoedinenie Vostochnoj Armenii k Rossii (v nachale XIX veka), M.: Socjekgiz, 184 s. (in Russian) Grigoryan Z. 1959, The Accession of Eastern Armenia to Russia (at the beginning of the 19th century), M.: Sotsekgiz, 184 p.
16. «Kavkazskij kalendar'» 1917, Tiflis, Tipografija Kanceljarii Namestnpka E. I. V. na Kavkaz, 1916, 1075 s. + 98 s. (in Russian) "Caucasian Calendar" 1917, Tiflis: The Publishing House of the Governor E. I. V. in the Caucasus, 1916, 1075 pages + 98 pages.
17. Melik-Sarkisjan R. 1979, Pereselenie armjan iz Persii v Vostochnuju Armeniju v 1828-1829 godah, «Vestnik Erevanskogo universiteta», № 2, s. 42-55. (in Russian) Melik-Sarkisyan R. 1979, The Migration of Armenians from Persia to Eastern Armenia in 1828-1829, “Bulletin of Yerevan University”, No. 2, p. 42-55.
18. **Mkrtchjan Sh. (1989),** Istoriko-arhitekturnye pamjatniki Nagornogo Karabaha, vtoroe izdanie, Yerevan: Izdatel'stvo «Parberakan», 360 s. (in Russian) Mkrtchyan Sh. 1989, Historical and Architectural Monuments of Nagorno-Karabakh, second edition, Yerevan: Parberakan Publishing House, 360 p.
19. Nagornyj Karabah: istoricheskaja spravka 1988, Redaktory – G. A. Galojan, K. S. Hudaverdjan, Yerevan: Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 96 s. (in Russian) Nagorno-Karabakh: A Historical Reference 1988, Editors - G. A. Galoyan, K. S. Khudaverdyan, Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 96 p.

20. Obzor Elisavetpol'skoj gubernii za 1913 god, 1915, Tiflis: Izdanie Elisavetpol'skago Gubernskago Statisticheskago Komiteta, Prilozhenie № 1, 85 s. + Prilozhenija. (in Russian) Overview of the Elisavetpol Province for 1913, 1915, Tiflis: Edition of the Elisavetpol Provincial Statistical Committee, Appendix No. 1, 85 p. + Appendix
21. Pervaja vseobshhaja perepis' naselenija Rossijskoj imperii 1897 g. Raspredelenie naselenija po rodnomu jazyku i uezdam: Shushinskij uezd. http://www.demoscope.ru/weekly/ssp/emp_lan_97_uezd.php?reg=397 18.08.2022 (in Russian) The First General Census of the Population of the Russian Empire in 1897 Distribution of the Population by Native Language and Districts: Shushi District.
22. Perepis' naselenija NKR 2015, Tablica 1.1. Nalichnoe i postojannoe naselenie administrativno-territorial'nyh edinic NKR (gorodskoe, sel'skoe) po rezul'tatam perepisej naselenija NKR 2005 i 2015 gg. i po polu, 2016, http://stat-nkr.am/files/publications/2016/Mardahamar_2015_rus/MAS_2/1_1_45_46.pdf 05.07.2022 (in Russian) Census of the NKR 2015, Table 1.1. The actual and permanent population of the administrative-territorial units of the NKR (urban, rural) according to the results of the population censuses of the NKR in 2005 and 2015 and by gender, 2016.
23. Prisoedinenie Vostochnoj Armenii k Rossii: sbornik dokumentov 1972, tom I (1801-1813), redaktor: akademik AN Arm. SSR C. P. Agajan, Yerevan: Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 716 s. (in Russian) The Accession of Eastern Armenia to Russia: Collection of Documents 1972, Volume I (1801-1813), Editor: Academician of the Academy of Sciences Arm. SSR Ts. P. Aghayan, Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 716 p.
24. Rossija i ee «kolonii». Kak Gruzija, Ukraina, Moldavija, Pribaltika i Srednjaja Azija voshli v sostav Rossii 2007, M.: Izdatel'stvo DAR##, 576 s. (in Russian) Russia and its "Colonies". How Georgia, Ukraine, Moldova, the Baltic states and Central Asia Became Part of Russia 2007, M.: Publishing House DAR, 576 p.
25. **Sarkisjan G. (2002),** Naselenie Vostochnoj Armenii v XIX – nachale XX v., Yerevan: Izdatel'stvo "Gitutjun" NAN RA, 212 s. (in Russian) Sargsyan G. 2002, The Population of Eastern Armenia in the 19th – early 20th Centuries, Yerevan: Gitutyun Publishing House of NAS RA, 212 p.
26. **Karapetian S. (2001),** Armenian Cultural Monuments in the Region of Karabakh, RAA Scientific Researches, Book III, Yerevan: "Gitutiun" Publishing House of NAS RA, 232 p.

Ներկայացվել է՝ 30.07.2022 Received 30.07.2022 Получено: 30.07.2022
Գրախոսվել է՝ 08.08.2022 Reviewed 08.08.2022 Рассмотрено: 08.08.2022
Ընդունվել է՝ 25.08.2022 Accepted 25.08.2022 Принято: 25.08.2022

E-mail: mmalkhasyan@ysu.am